

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ավագանու 2016 թվականի
դեկտեմբերի 14-ի N 63-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021թթ.

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմեց՝ համայնքի ղեկավար՝

Ռ. Պետրոսյան

Հաստատվել է համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 14-ի N 63 -Ն որոշմամբ
(նիստի ամսաթիվը)

ՋՐՎԵԺ 2016

Բովանդակություն

Համայնքի ղեկավարի ողջույնի

խոսքը.....3

1 Համայնքի իրավիճակի կարագրությունը.....4

1.1 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը.....5

1.2 Համայնքում իրականացվող ծրագերը.....7

1.3 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանսական կանխատեսումները.....8

1.4 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ.....16

1.5 Սոցիալ-տնտեսական զարգացումը խոչընդոտող գործոններ.....17

1.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն.....19

2. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում..... 20

2.1 Համայնքի զարգացման տեսլական.....20

2.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ.....21

3. ՀԶԾ ֆինանսավորում.....34

4.ՀԶԾ-ի իրականացումը, մշտադիտարկումը (մոնիտորինգը), գնահատումը, վերահսկումը և վերանայումը....36

Եզրափակում.....50

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի 2017-2021 թթ. զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀՋԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ծրագիրը:

ՀՋԾ-ը մշակվել է՝ հիմք ընդունելով ներկայումս գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ՏԻՄ-երի իրավասությունները, համայնքի ղեկավարի լիազորությունները նրա գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀՋԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ օրենքի 37-րդ, 38-րդ և 53-րդ հոդվածների դրույթները:

ՀՋԾ-ը մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները՝ համայնքի ֆինանսական կարողությունը, համայնքի բնակչության թվաքանակը, համայնքում առկա ենթակառուցվածքները և մատուցվող հանրային ծառայությունները, համայնքի առանձնահատկությունները և համայնքում առկա վտանգները (ոհսկերը):

Առաջիկա հինգ տարիների ընթացքում նախատեսվում է Ջրվեժ համայնքը դարձնել մաքուր, բարեկարգ, առևտրի և սպասարկման, կրթական և մշակութային զարգացած ենթակառուցվածքներ ունեցող, բնակչության համար բավարար կենսապայմաններով և աշխատատեղերով ապահովված, զբոսաշրջության համար գրավիչ տարածք:

ՀՋԾ-ն համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը առաջիկա հինգ տարիների ընթացքում նախատեսում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը, համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացումը, բնակչության սոցիալ-տնտեսական առաջընթացի ապահովումը, նրանց կյանքի ու կենցաղի բարեկեցիկ միջավայրի ստեղծումը՝ ձգտելով համայնքի տեսլականի իրականացմանը:

Համայնքի զարգացման հիմնական ուղղությունները հետևյալն են. համայնքում նախադպրոցական հիմնարկի կառուցումը, նոր թաղամասերում կոյուղու, ջրամատակարարման գազամատակարարման և արտաքին լուսավորման համակարգերի կառուցումը, ճանապարհների բարեկարգումն ու ասֆալտապատումը,

հանգստի և զբոսանքի համար այգու հիմնումը, խաղահրապարակի ստեղծումը, փոքր և միջին բիզնեսին մշտական աջակցումը, աշխատատեղերի ստեղծմանը խթանումը, բնակչության իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Համայնքի հիմնական խնդիրներն են բնակչության ցածր կենսամակարդակը, սոցիալ տնտեսական ոչ բավարար պայմանները, զբաղվածության ցածր աստիճանը, վարչական տարածքի կտրտվածությունը:

ՀԶԾ-ն մշակվել է համայնքի ղեկավարի, աշխատակազմի և համայնքի ավագանու 12.11.2016 թվականի N52-Ա որոշմամբ ձևավորված «Ջրվեժ համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի» (ԽՄ) կողմից:

1. Համայնքի իրավիճակի նկարագրություն

Ջրվեժ համայնքը գտնվում է Կոտայքի մարզի հարավային մասում, սահմանակից է Երևան քաղաքի Նոր-Նորք, Ավան-Առինջ, Էրեբունի համայնքներին և մարզի Առինջ, Ձորաղբյուր, Ողջաբերդ համայնքների վարչական տարածքներին: Մարզկենտրոնից գտնվում է 45 կմ հեռավորության վրա, Արսլան քաղաքից՝ 9 կմ:

Ջրվեժ տեղանունը հիշատակվում է դեռևս V դարում՝ պատմաբան Ղազար Փարպեցու, VII դարում՝ սարկավագ Զաքարյա Քանաքեռցու աշխատություններում: Պատմական տեղեկությունների համաձայն Ջրվեժ տեղանունը ոչ մի անգամ չի վերանվանվել: Գյուղը ծովի մակարդակից բարձր է 1380 մետր, աշխարհագրական դիրքը նախալեռնային է: Վերջին տարիներին հաճախակի է կարկտահարությունը:

Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները (01.10.2016 թ. դրությամբ)

Վարչական տարածքը, հա	Առկա բնակչության թվաքանակը	Մշտական բնակչության թվաքանակը	Առկա տնային տնտեսությունների թվաքանակը	Մշտական տնային տնտեսությունների թվաքանակը
1851.02	6903	6353	1379	1620

Աղյուսակ 2. Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշները	Ընդամենը	Կանայք	Տղամարդիկ
1.	Համայնքի բնակչության թիվը, այդ թվում՝	6817	3308	3509
	մինչև 1 տարեկան	60	30	30
	1-2 տարեկան	194	89	105
	3-4 տարեկան	192	89	103
	5-6 տարեկան	227	105	122
	7-10 տարեկան	416	182	234

	11-14 տարեկան	325	127	198
	15-17 տարեկան	227	109	118
	18 և ավելի տարեկան	5176	2778	2398
2.	Կենսաթոշակառուներ(ներառյալ հաշմանդամներ)այդ թվում՝ Տարիքային և աշխատանքային	1056	573	483
3.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	17	9	8
4.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	2	2	-
5.	Հաշմանդամ երեխաներ	23	7	26
6.	Խնամակալության հանձնված երեխաներ	-	-	-
7.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	4	-	4
8.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	19	-	19
9.	Հաշմանդամներ	224	90	134
10.	Զբաղվածներ	1207	479	728
11.	Գործազուրկներ	3137	1816	1321
12.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	73		
13.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	10	-	10

1.1 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

Զրվեժ համայնքի 2016 թվականի ճշտված բյուջեն եկամուտների գծով կազմել է 171,918.0 հազ. դրամ, ծախսերի գծով՝ 235,410.2 հազ. դրամ, դեֆիցիտը կազմել է 64,212.2 հազ. դրամ: Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտները կազմում են 56.6%:

Մինչև 1990-ական թվականները համայնքին հարակից Երևան քաղաքի վարչական տարածքում գործում էին 6 խոշոր արտադրական ձեռնարկություններ, 3 խոշոր ավտոպարկեր, երկու նախագծային հիմնարկներ, որոնք ունեին մոտ 9000 աշխատատեղ և բնակչության հիմնական մասը աշխատում էր այդ ձեռնարկություններում, մոտ 300 մարդ աշխատում էր Զրվեժի անտառտնտեսությունում, սակայն այժմ նշված ձեռնարկությունները հիմնականում մասնավոր կազմակերպություններ են և գործունեություն չեն ծավալում: Այդ ձեռնարկությունների շենքերի ոռոշակի հատվածներում վարձակալական հիմունքներով գործում են փոքր և միջին բիզնեսի մի քանի կազմակերպություններ սահմանափակ աշխատատեղերով: Համայնքում գործում են նաև մետաղապլաստե դռների և պատուհանների, մրգերի և բանջարեղենի պահածոների, երշիկի պատրաստման, օղու, հացի և հացամթերքների, քաղցրավենիքի պատրաստման արտադրական փոքր և միջին ծավալի հզորություններ, որոնց արտադրանքի հիմնական սպառման շուկան Հայաստանի Հանրապետությունն է: Համայնքում գյուղատնտեսական արտադրանքի ծավալները մեծ չեն, քանի որ լուծված չէ ոռոգման հարցը: Հողերի մեծ մասը անջրդի են: Նախկին ոռոգման համակարգերը քայքայված և օգտագործման համար պիտանի չեն: Նոր համակարգերի կառուցումը միայն համայնքի սեփական միջոցների հաշվին իրատեսական չէ: Համայնքում մասնավոր անձանց կողմից կա զգված մոտ 40.0 հա նորատունկ այգի, որից՝ 25 հա բերքի տակ: Մրգի որոշ քանակություն արտահանվում է Ռուսաստանի Դաշնություն, մնացածը իրացվում է ՀՀ-ում:

Համայնքը հարուստ չէ պատմական և մշակութային հուշարձաններով:

Գյուղի շրջակայքում կատարված պեղումներով Քոսաղբյուր կոչված վայրում (1957 թ.) և գերեզմանոցում (1958-1962 թ.թ.) բացվել են միջնադարյան ճարտարապետական երկու համալիրներ:

Հայաստանում 1679 թվականի ավերիչ երկրաշարժի հետևանքով ամբողջովին ավերվել է նաև համայնքի Կաթողիկե եկեղեցին և միայն 1891 թվականին վերակառուցվել է գյուղի բնակչության ուժերով: Հատկապես Հայրենական Մեծ Պատերազմի տարիներին եկեղեցին ծառայել է որպես հացահատիկի շտեմարան: Վերաբացվել է 1991 թվականին և ներկայումս համայնքում գործում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Կոտայքի թեմի Ջրվեժի Սուրբ Կաթողիկե Առաքելական եկեղեցի անվամբ:

Համայնքում է գտնվում նաև «Խաչատուրի հուշարձանը» իր փոքրիկ պուրակով: Դա մի քսանամյա երիտասարդ ջրվեժն է, որի տապանաքարին մինչև օրս պահպանված արձանագրության (1173թ.) համաձայն երիտասարդ հասակում Խաչատուրը զոհվել է հանուն իր ծննդավայրի՝ առաջինը ոռոգման ջրից օգտվելու իրավունքի, որպեսզի ոռոգվեն գյուղի այգիները, բանջարանոցներն ու արտերը:

Խաչատուրի հիշատակը հավերժացնելու համար Վարդ անունով մի վարպետի կողմից 1173 թ. թվագրությամբ կարմիր տուֆից հոյակերտ մի խաչքար է տաշվել, որի բարձրությունը 1.90 մ է, լայնությունը՝ 0.90 մ, հաստությունը՝ 0.28 մ: Այդ խաչքարը, ըստ հնագետ Տոկարսկու, 1930-ական թվականներին տեղափոխվել է Հայաստանի պետական պատկերասրահ: Այժմ այն՝ բաց ցուցադրությամբ գտնվում է Սարդարապատում՝ Հայաստանի ազգագրության պետական թանգարանում:

Համայնքի կենտրոնում է գտնվում նաև ՀՄՊ-ի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանը:

Համայնքում գործում է «Ջրվեժի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը, «Ջրվեժի մանկական երաժշտական դպրոց» ԱԿՈՒՀ ՀՈԱԿ-ը, «Մենապայքարային մարզաձևերի ազատ ոճի ընթշամարտի մանկապատանեկան մարզադպրոց ՊՈԱԿ-ը»:

Աղյուսակ 3. Ջրվեժ համայնքի հանրակրթական դպրոցի, արտադպրոցական ուսումնական հաստատությունների վերաբերյալ ցուցանիշներ

Հ/հ	Հաստատության անվանումը	Աշխատողների թիվը	Սովորողների թիվը
1.	« Ջրվեժի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	83	1065
2.	«Ջրվեժի մանկական երաժշտական դպրոց» ԱԿՈՒՀ ՊՈԱԿ	20	131
3.	«Մենապայքարային մարզաձևերի ազատ ոճի ընթշամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ	20	156

Համայնքի բնակչությանը սպասարկող միակ առողջապահական հաստատությունը

«Ջրվեժի Բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ-ն է: Սակայն բնակչությունը ակտիվորեն օգտվում է նաև Երևան քաղաքի տարբեր բժշկական կենտրոնների ծառայություններից, հատկապես Նոր Նորք վարչական շրջանի Ս.Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոնի ծառայություններից: Բնակչությունը

անվճար օգտվում է նաև Երևանի շտապ օգնության ծառայությունից: Նշվածը համայնքի ուժեղ կողմերից մեկն է:

Համայնքում ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքների թիվը 64 է:

Համայնքում ներկայումս հաշվառված փախստականների թիվը 6-ն է:

1.2 Համայնքում իրականացվող ծրագրերը

Համայնքի վարչական տարածքում պետության կողմից գալիք հինգ տարիների համար հանրապետական և մարզային ծրագրեր և միջոցառումներ դեռևս չեն նախատեսվել: «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագիրը շարունակվելու դեպքում նախատեսվում է մասնակցել ծրագրին, համայնքում շարունակել ոռոգման ջրագծերի կառուցումը, խթանել գյուղատնտեսության զարգացումը, էկոլոգիապես մաքուր մթերքների արտադրությունը և դրանց մշակման համար արտադրական հզորությունների ստեղծումը:

Այս ծրագրի իրագործման համար համայնքը նախատեսում է մշակելու միջհամայնքային համագործակցության նպատակային ծրագիր, որոնելու տեղական կամ միջազգային դոնոր կազմակերպություններ, կատարելու ներդրումներ:

Նախատեսվում է նաև համագործակցել Ռուսաստանի Դաշնության կամ եվրոպական երկրների մեկ, երկու համայնքների հետ, որտեղ գործում են գյուղատնտեսական արտադրանքի մշակման արտադրություններ: Նպատակը փորձի փոխանակումն է և նախատեսվող արտադրանքի իրացման շուկաների որոնումը:

Ծրագրի նպատակն է համայնքում և հարակից այլ համայնքներում շահագրգռել բնակչությանը զբաղվելու գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ: Ծրագրի իրականացմամբ համայնքում կստեղծվեն նոր աշխատատեղեր: Հայաստանում աճող և միրգը, և բանջարեղենը համեղ են և լավ արտադրություն կազմակերպելու դեպքում արտադրանքը՝ պահածոյացված միրգ, բանջարեղեն, չրեր, կգտնի իր սպառողին:

Համայնքում նախատեսվում է ստեղծել նաև բավարար պայմաններ՝ աջակցելու համար տեղացի և արտասահմանյան բարերարների կողմից առաջարկվող ծրագրերի իրականացմանը: Այդպիսի ծրագիր կարող է հանդիսանալ համայնքում նախադպրոցական հիմնարկի կամ մշակույթի կենտրոնի կառուցումը: Համայնքը պատրաստակամ է հատկացնել համապատասխան տարածք, ծրագրի արժեքի մինչև 5%-ի չափով ֆինանսական ներդրում, ինչպես նաև փոխադարձ համաձայնությամբ այլ պայմանների բավարարում (կառույցը կարող է պատկանել ներդրողին սեփականության իրավունքով՝ ներդրմանը համարժեք բաժնեմասով, անվանակոչվել նրանց անվամբ կամ այլ):

Համայնքում նոր թաղամասերում շարունակվելու են քաղաքաշինական հիմնական ծրագրերը, այդ թվում՝ ջրամատակարարման ցանցի ընդլայնման, ճանապարհների բարեկարգման և ասֆալտապատման, ջրահեռացման, գազամատակարարման և արտաքին լուսավորության համակարգերի կառուցման և դրանց սպասարկման աշխատանքները:

Նախատեսվում է համագործակցել համայնքում գործող մասնավոր ընկերությունների հետ, ինչպես նաև գտնել նոր մասնավոր կազմակերպություններ, որոնք կցանկանան համայնքում կատարել ներդրումներ և իրականացնել միջոցառումներ: Այս դեպքում նույնպես նպատակը աշխատատեղերի ստեղծումն է, բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների և գործարար միջավայրի բարելավումն է:

Նախատեսվում է նաև համայնքում հիմնել թեթև արդյունաբերության ոլորտի արտադրություն մինչև 50 աշխատատեղով:

1.3 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանսական կանխատեսումները

Համայնքի բյուջեն ձևավորվում է սեփական եկամուտներից և պետական բյուջեից համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայից: Համայնքի սեփական եկամուտներում գերակշռում է գույքահարկը, որը կազմում է համայնքի բյուջեի սեփական եկամուտների 59.4%-ը: Համայնքի զարգացման ծրագրի ցուցանիշներով նախատեսվում է համայնքի սեփական եկամուտների աճ տարեկան 0,4%-ով:

Աղյուսակ 4.

Համայնքի 2015-2016թթ. բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

հազար դրամ

Հ/հ	Մուտքերի անվանումը	2015թ. փաստ.	2016թ. նախատես.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	323973.8	283194.0	204998.0	199088.0	196645.0	194381.0	193068.0
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*	171024.8	171198.0	171520.0	177088.0	176645.0	176381.0	177068.0
1	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	65169.4	67391.6	74049.0	74205.0	74400.0	74645.0	74870.0
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	27745.2	34076.0	34396.0	34500.0	34610.0	34770.0	34900.0
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	29569.8	32356.0	32576.0	32650.0	32720.0	32850.0	32950.0
	Հողի հարկ	2002.4	1720.0	1820.0	1850.0	1890.0	1920.0	1950.0
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	27745.2	26439.0	29125.0	29135.0	29160.0	29195.0	29250.0
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	27745.2	26439.0	29125.0	29135.0	29160.0	29195.0	29250.0
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության	5581.9	6876.6	10528.0	10570.0	10630.0	10680.0	10720.0

	իրականացման թույլտվության վճարներ							
	Տեղական տուրքեր	5581.9	6876.6	10528.0	10570.0	10630.0	10680.0	10720.0
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ							
	Պետական տուրքեր							
1.5	Այլ հարկային եկամուտներ							
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ							
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ							
2	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	73674.0	74357.6	72168.0	72570.0	73050.0	73680.0	74150.0
2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ							
2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ							
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	73674.0	72168.0	72168.0	72570.0	73050.0	73680.0	74150.0
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	73674.0	72168.0	72168.0	72570.0	73050.0	73680.0	74150.0

բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ		2189.6					
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)							
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
2.4	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ							
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)							
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
3	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	31497.8	29448.8	25303.0	30313.0	29195.0	28056	28048.0
3.1	Տոկոսներ							
3.2	Շահաբաժիններ							
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	5976.4	5482.8	4933.0	5561.0	4815.0	3784.0	3756.0
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	5195.9	4864.8	4325.0	4920.0	4206.0	3206.0	3206
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ							

	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ							
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	780.5	618.0	608.0	641.0	609.0	578.0	550.0
3.4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում							
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ							
3.5	Վարչական գանձումներ	25069.1	23766.0	24480.0	24552.0	24180	24072	24092.0
	Տեղական վճարներ	15482.1	16320.0	19560.0	19632.0	19680.0	19752.0	19992.0
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ	9587.7	7446.0	4920.0	4920.0	4500.0	4320.0	4100.0
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների							

	դիմաց ստացվող (զանձվող) վճարներ							
3.6	Մուտքեր տույժերից, տուգանքներից	410.0	200.0	200.0	200.0	200.0	200.0	200.0
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ	410.0	200.0	200.0	200.0	200.0	200.0	200.0
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց զանձվող տույժերից							
3.7	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ							
3.8	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ							
3.9	Այլ եկամուտներ*	41.6						
	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր							
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր							
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	41.6						
II.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)	22875.2	47784.0	5000.0	5000.0	5000.0	5000.0	5000.0
1	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր		1066.0					
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր							

	Շարժական գույքի իրացումից մուտքեր							
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր		1066.0					
2	Պաշարների իրացումից մուտքեր							
3	Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր							
4	Հարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	22875.2	46718.0	5000.0	5000.0	5000.0	5000.0	5000.0
	Հողի իրացումից մուտքեր	22875.2	46718.0	5000.0	5000.0	5000.0	5000.0	5000.0
	Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր							
III.	ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)	130,091.8	64212.2	28800.0	17000.0	15000.0	13000.0	11000.0
Ա.	ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)	130,091.8	64212.2	28800.0	17000.0	15000.0	13000.0	11000.0
1	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ							
1.1	Արժեթղթեր							
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր							
	-հիմնական գումարի մարում							
1.2	Վարկեր							
	-վարկերի ստացում							
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում							
1.3	Փոխատվություններ							
	-բյուջետային փոխատվությունների ստացում							
	-ստացված փոխատվությունների							

	գումարի մարում							
2	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ							
2.1	Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն							
	-համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր							
	-իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր							
	-բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում							
2.2	Փոխատվություններ							
	-նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր							
	-փոխատվությունների տրամադրում							
2.3	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը	130,091.8	64212.2	28800.0	17000.0	15000.0	13000.0	11000.0
2.4	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում							

	վարչական մաս							
2.5	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս							
2.6	Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում	64212.2						
	որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը							
Բ.	ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ							
1	ՓՈՒՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ							
1.1	Արժեթղթեր							
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր							
	-հիմնական գումարի մարում							
1.2	Վարկեր							
	-վարկերի ստացում							
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում							
1.3	Փոխատվություններ							
	-փոխատվությունների ստացում							
	-ստացված փոխատվությունների գումարի մարում							

Աղյուսակ 5. Համայնքի 2017-2021թթ. Բյուջեի եկամտների կանխատեսումը

Եկամտի և ծախսի տեսակը	2015թ. Տարեկան պլան	2017 կանխ. թ.	2015թ փաստ.նկատ %	2018թ. կանխ.	2015թ փաստ.նկատ %	2019թ. կանխ.	2015թ փաստ.նկատ %	2020թ. կանխ.	2015թ փաստ.նկատ %	2021թ. կանխ.	2015թ փաստ.նկատ %
Ընդամենը եկամուտներ	160914.0	171520.0	100.3	177088.0	103.5	176645.0	103.3	176381.0	103.1	177068.0	103.5
Հարկային եկամուտներ, որից	53212.0	63521.0	107.1	63635.0	107.3	63770.0	107.5	63965.0	107.5	64150.0	107.6
Հող իհարկ	1682.0	1820.0	90.9	1850.0	92.4	1890.0	94.4	1920.0	94.4	1950.0	94.4
Գույքահարկ	51530.0	61701.0	107.7	61785.0	107.8	61880.0	108.0	62045.0	108.0	62200.0	108.1
Տեղական տուրքեր	5612.1	10528.0	180.0	10570.0	180.6	10630.0	101.0	10680.0	101.0	10720.0	101.0
Պաշտոնականընթացիկդրամաշն.	74357.6	72168.0	180.6	72570.0	97.1	73570	97.2	73680	97.0	74150	97.3
Այլ եկամուտներ	27732.3	25303.0	96.2	30313.0	80.3	29195.0		28056.0		28048.0	
Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	22875.2	5000.0	21.8	5000.0	21.8	5000.0	2	5000.0	41.7	5000.0	41.7
Տարեկգրի ազատ մնացորդ	130091.8	28800.0	22.1	17000.0	12.6						
Ընդամենը	313881.0	205320.0	65.4	200320.0		181645.0		181381.0		182068.0	

1.4 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Համայնքի առջև ծառայած հիմնխնդիրները հետևյալ են

- 1) Աշխատատեղերի ստեղծումը,
- 2) Համայնքի գույքի կառավարումը,
- 3) Նախադպրոցական հաստատության կառուցումը և նախադպրոցական կրթության կազմակերպումը,
- 4) Երիտասարդության ներգրավմամբ ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը,
- 5) ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը,
- 6) Մշակույթի տան կառուցումը
- 7) Գյուղատնտեսության զարգացման խթանումը,
- 8) Համայնքի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը,
- 9) Համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը,

- 10) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը,
- 11) Բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

Վերը նշված՝ զարգացման ծրագրերի իրականացման հիմնական խորընդոտ է հանդիսանում համայնքի ֆոնդային բյուջեի միջոցների սահմանափակ լինելը, ներքին և արտաքին դրամաշնորհային ծրագրերի բացակայությունը: Համայնքի ֆոնդային մասի ֆինանսական միջոցները գոյանում են հիմնականում հողերի գործառնական նշակության փոփոխություններից համայնքի բյուջե մուտքագրվող կադաստրային արժեքի տարբերության գումարից, երբեմն աճուրդով հողամասերի վաճառքից բյուջե մուտքագրվող հողի արժեքից և վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներից: Սակայն համայնքի առջև ծառայած հիմնախնդիրների լուծումը գրեթե ամբողջությամբ պահանջում են կապիտալ ներդրումներ:

Համայնքում չկա նախադպրոցական հիմնարկ, մարզական ակումբ կամ հրապարակ: Համայնքում հունա-հռոմեական ընթշամարտով պարապող երեխաները պարապմունքներն անց են կացնում Ջրվեժի միջնակարգ դպրոցի դահլիճում, որը այդպիսի պարապմունքների համար չունի բավարար սանիտարահիգիենիկ պայմաններ (բացակայում են տաք և սառը ջուրը, սան. հանգույցները և ցնցուղները): Սակայն դպրոցը գրանցել է նաև լուրջ հաջողություններ: Վերը նշվածի հետևանքով դպրոցական բազմաթիվ միջոցառումներն անց են կացվում դպրոցի միջանցքներում:

Համայնքի բնակչության կենցաղային աղբի և համայնքի վարչական տարածքի սանիտարական մաքրման ծառայություններն իրականացվում են համայնքի սեփականությունը հանդիսացող մեկ աղբատար, երկու ինքնաթափ և մեկ ջրող-վաճող կամ ձյուն մաքրող ավտոմեքենաների միջոցով, որոնցից ամենանորը ձեռք է բերվել 2007 թվականին: Այդ ավտոմեքենաները հաճախ են խափանվում, որի հետևանքով սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումը խաթարվում է, իսկ նոր տեխնիկական միջոցների ձեռքբերումը նույնպես պահանջում է կապիտալ ներդրումներ, որը միայն համայնքի բյուջեի միջոցների հաշվին իրատեսական չէ: Եթե համայնքը կարողանա ձեռք բերել մեկ ժամանակակից աղբատար մեքենա, ապա աղբահանության ծախսերը կնվազեն առնվազը 30%-ով, աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների կազմակերպումը կդառնա ավելի արդյունավետ, հնարավոր կլինի համայնքի ամբողջ վարչական տարածքի սպասարկումն իրականացնել շաբաթական առնվազը երկու անգամ, իսկ կենտրոնական փողոցներինը՝ ամեն օր: Չնայած դրան համայնքում սանիտարական մաքրման և աղբահանության ծառայություններն իրականացվում են պարբերաբար: Համայնքում ոչ բոլոր տնտեսավարող սուբյեկտներն են, որ ապահովում են իրենց շրջակա միջավայրի սանիտարա-հիգիենիկ բավարար պայմանների ստեղծումը: Դեռևս կան աղտոտվող տարածքներ, որոնց ամենօրյա հսկողությունը գրեթե անհանար է:

Գյուղատնտեսական բնագավառի գործունեությանը խթանելու նպատակով անհրաժեշտ է լուծել ոռոգման ջրագծերի կառուցման խնդիրը, որը նույնպես պահանջում է կապիտալ ներդրումներ:

Գյուղատնտեսական մթերքների արտադրության և արտահանման նպատակով նախատեսվում է աջակցել մեղվաբուծությունը՝ ստեղծելով կոպերատիվ կամ համատեղ տնտեսություն:

Համայնքում գործող մանկական երաժշտական դպրոցը չունի շենքային պայմաններ, տեղակայված է Ջրվեժի միջնակարգ դպրոցի երկու մասնաշենքերն իրար միացնող միջանցքի մի

հատվածում: Չնայած դրան դպրոց հաճախող երեխաների թիվը չի պակասում, որը կազմում է միջին հաշվով տարեկան 130-135 երեխա:

1.5 Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը խոչընդոտող գործոններ

1. Համայնքում գործարար միջավայրի բարելավման և ձեռներեցության խթանման խոչընդոտներից է բանկերից հատկացվող վարկերի բարձր տոկոսադրույքները, հարկային արտոնությունների բացակայությունը, ներդրումների բացակայությունը,

2. Համայնքի գույքի կառավարմանը խոչընդոտող գործոններն են

Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ֆինանսական միջոցների սղությունը, համայնքի սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցների (աղբատար, ջրող-վաճող և բեռնատար) անբավարար վիճակը,

3. Նախադպրոցական կրթության կազմակերպման անհնարինությունը նախադպրոցական հիմնարկի շենքի բացակայության պատճառով,

4. Արտադպրոցական կրթության համար շենքային ոչ բավարար պայմանները,

5. Ակտիվ մշակութային և մարզական կյանքի և միջոցառումների կազմակերպման համար մարզասրահի, մշակույթի տան բացակայությունը, որը խոչընդոտում է նաև ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսմանը, համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպմանը,

6. համայնքում բնակարանային շինարարության խթանումը,

1) համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը,

2) համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը,

3) պետության պաշտպանության իրականացման աջակցումը,

4) աղետների դիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը,

5) գյուղական բնակավայր ընդգրկող համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանումը,

6) համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը,

7) զբոսաշրջային հեռանկարներ ունեցող համայնքներում՝ զբոսաշրջության զարգացման խթանումը,

8) համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում,

9) համայնքում ծնելիության և բազմազավակության խթանումը,

10) համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը,

11) համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանումը,

12) համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստելը,

13) բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

1.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Համայնքի ուժեղ կողմերն են.

1. Երևան քաղաքին սահմանակից լինելը, երիտասարդության՝ կրթական համակարգերից օգտվելու հնարավորությունը,

2. Գտնվում է Երևան-Գառնի ավտոճանապարհին

3. Բնակչության բուժ. զննումը և առողջության վերականգնումը Երևան քաղաքի առողջապահական կենտրոններում կազմակերպելու հնարավորությունը,

4. Աշխատուժի առկայությունը,

5. Համայնքում բարձրագույն և միջնակարգ կրթությամբ աշխատուժի առկայությունը,

6. Համայնքի շրջակայքում արտադրական շինությունների առկայությունը,

7. Բնակավայրի մեծ մասում ինքնահոս խմելու ջրի առկայություն,

9. Հասարակական սննդի օբյեկտների առկայություն.

10. Գործող եկեղեցի և եկեղեցուն կից՝ կրթա-մշակութային կենտրոնի առկայություն.

11. Համայնքի ղեկավար-ավագանի-բնակիչներ՝ ամուր կապ և փոխհամաձայնեցում,

12. Համայնքի ղեկավարի երկարամյա փորձ և ազգաբնակչության վստահություն:

Համայնքի թույլ կողմերն են.

1. Բյուջեի ֆոնդային մասի միջոցների սղություն,

2 Բնակավայրի նոր թաղամասում կոյուղու համակարգի բացակայություն.

3 Նոր գյուղատեղում ճանապարհների անբարեկարգ վիճակ,

4 Արդյունաբերական հանգույցների չաշխատելու պատճառով գործազրկության առկայություն, աշխատատեղերի սակավություն.

5 Ազգաբնակչության անվճարունակություն, սոցիալ-տնտեսական պայմանների ոչ բարձր մակարդակ.

6 Մանկապարտեզի, մշակույթի տան և մարզադպրոցի բացակայություն, երաժշտական դպրոցի շենքային պայմանների բարելավման անհրաժեշտություն,

7 Ոռոգման ջրի սղություն և ցանցերի բացակայություն,

8 Այգիների բացակայություն, գյուղատնտեսության համար պիտանի հողերի սակավություն, հողերի կտրտվածություն,

- 9 Որոշ փողոցներում խմելու ջրագծի ներքին ցանցի վերանորոգման, նոր թաղամասում խմելու ջրագծերի կառուցման անհրաժեշտություն,
- 10 Նոր թաղամասի գազաֆիկացման ծավալների ավելացման անհրաժեշտություն:

Հնարավորությունները

1. Փոքր և միջին ձեռնարկատիրության, ձեռներեցության բավարար միջավայրի ստեղծում
2. Զբոսաշրջային գոտի դարձնելու հնարավորություն,
3. Սպասարկման ոլորտում առաջնակարգ դիրք ապահովելու հնարավորություն

Սպառնալիքները

1. Բնական աղետներ (երկրաշարժ, սողանք, կարկուտ և այլն),
2. Ուժեղ անձրևներից սելավների հնարավորություն,
3. Օրենսդրական դաշտի անկատարություն.
4. Հարկերի և վարձավճարների գանձման դժվարություններ:

2. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

6.1. Համայնքի զարգացման տեսլական

Ջրվեժ համայնքը մաքուր, բարեկարգ, կանաչապատ, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և անհրաժեշտ աշխատատեղերով ապահոված, առևտրի և սպասարկման, կրթական և մշակութային զարգացած ենթակառուցվածքներ ունեցող, զարգացող փոքր և միջին ձեռնարկատիրությամբ, զբոսաշրջության համար գրավիչ տարածք է: Համայնքում մատուցվում են բնակչության համար անհրաժեշտ հանրային բոլոր ծառայությունները:

Նշված տեսլականին հասնելու համար համայնքը որդեգրել է հետևյալ ռազմավարությունը՝

- ✓ Ապահովել համայնքի համաչափ զարգացումը
- ✓ Տարեցտարի բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով համայնքի բյուջեի հարկային եկամուտների գանձման, ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի ու վճարների սահմանման և գանձման արդյունավետ քաղաքականություն
- ✓ Նպաստել ձեռներեցության խթանմանը՝ այն սերտորեն կապելով համայնքի տնտեսական զարգացման հետ
- ✓ Պահպանել համայնքի ոճը, բացառել ինքնակամ շինարարությունը և ապօրինի հողազավթումները

✓ Իթանել համայնքային տարբեր շահագրգիռ կողմերի, դոնոր կազմակերպությունների, հասարակական և բարեգործական կազմակերպությունների, անհատների նախաձեռնությունները և նրանց ներգրավմամբ հետևողականորեն իրականացնել բարեփոխումներ՝ նպաստելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը

✓ Սերտորեն համագործակցել համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների հետ

✓ Նպաստել համայնքում աշխատատեղերի ընդլայնմանը՝ ռացիոնալ օգտագործելով բնական ռեսուրսները, զարգացնելով առևտրի և սպասարկման ոլորտն ու գյուղատնտեսությունը

✓ Բարձրացնել բնակչության կենսամակարդակը՝ ընդլայնելով մատուցվող հանրային ծառայությունների որակն ու շրջանակը

Համայնքի զարգացման 2017-2021թթ. ծրագրի հիմնական **նպատակներն են՝**

✓ Ունենալ բարեկարգ և լուսավոր ներհամայնքային ճանապարհներ և փողոցներ

✓ Կառուցել նախադպրոցական ուսումնական հաստատության շենքը, ապահովել գույքով և կազմակերպել նախադպրոցական կրթության մատուցման ծառայություններ

✓ Նոր թաղամասերում կառուցել խմելու ջրի ջրամատակարարման ցանցը և ջրահեռացման համակարգ,

✓ Ունենալ մաքուր շրջակա միջավայրով համայնք՝ չխախտելով բնության և շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ վիճակը, խուսափել հիվանդություններից և համաճարակներից

✓ Համայնքը դարձնել ավելի հետաքրքիր, հրապուրիչ և հարմարավետ բնակիչների համար

✓ Ունենալ հողամասեր տանող հարթ և բարեկարգ ճանապարհներ՝ նպաստելով այգեգործության և էկոտուրիզմի զարգացմանը

✓ Ակտիվացնել համայնքի մշակութային կյանքը

✓ Համայնքի բնակիչներին և զբոսաշրջիկներին ապահովել նրանց հանգստի կազմակերպման, շփումների ապահովման հաճելի պայմաններով

✓ Ունենալ բարեկարգ և անհրաժեշտ գույքով հագեցած գործող սպորտային ենթակառուցվածք

✓ Ունենալ բարեկարգ զբոսայգի, խաղահրապարակներ

✓ Կառուցել ոռոգման ջրագիծ և արդյունավետ օգտագործել ոռոգման ջրի պաշարները,

✓ Ապահովել տրանսպորտային կապը մայրաքաղաքի հետ

3. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում ներկայումս արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման՝ ՏԻՄ-ի կողմից ընտրված ռազմավարությունից և առաջիկա հինգ տարիների համար սահմանված հիմնական նպատակներից, ՀԶԾ-ի կառավարման ԿԱԽ-երի և ԽՄ-ի կողմից քննարկվել և որոշվել է առաջարկվող ծրագրերի ցանկը (աղյուսակ 13)՝ ընդգրկելու համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ում: Այդ ծրագրերի մի մասի իրականացումը համարվում է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություն, իսկ մյուս մասը դուրս է վերջիններիս լիազորությունների շրջանակից, սակայն դրանց իրականացումը խիստ կարևոր նշանակություն ունի բնակչության բարեկեցությունը և համայնքի համալիր ու առաջանցիկ զարգացումը ապահովելու համար: Օրինակ, համայնքի աշխատակազմի պահպանման ծրագիրը (համապատասխան ծախսերը պլանավորելիս հաշվի է առնվել նվազագույն աշխատավարձի նախատեսվող փոփոխությունները և գնաճը) և նախադպրոցական կրթության ծառայության մատուցումը նույն քանակի երեխաների և նույն գույքի պայմաններում: Այնուհետ ձևակերպվել են մնացած ծրագրերը (ծառայությունները), որոնց համար պետք է որոշվեն առաջնահերթությունները:

Աղյուսակ 6.

ՀԶԾ-ում ընդգրկելու համար առաջարկվող ծրագրերի ցանկ

Ը/Ը	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը (հազ. դրամ)
1.	Ջրվեժ համայնքի աշխատակազմի պահպանում	54681.1(տարեկան)
2.	Հանրային ծառայությունների մատուցման ծախսեր	3198.4 (տարեկան)
3.	Քաղաքացիական, փրկարար ծառայության մատուցման ծախսեր	350.0 (տարեկան)
4.	Ոռոգման ջրագծի կառուցում	7500.0 (տարեկան)
5.	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայության մատուցման ծախսեր	15295.0(տարեկան)
6.	Մշակութային ծառայությունների մատուցման ծախսեր	4140.0(տարեկան)
7.	Նախադպրոցական հիմնարկի կառուցում	350000.0
8.	Արտադպրոցական կրթության ծառայության մատուցում	19,606.5(տարեկան)
9.	Սոցիալական պաշտպանություն	1,860.0 (տարեկան)
10.	Համայնքային ենթակառուցվածքների պահպանման ծախսեր	5,628.0(տարեկան)

11.	Ջրահեռացման (կոյուղու) համակարգի կառուցում	10000.0
12.	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների կառուցում	33,500.0
14.	Խմելու ջրագծերի կառուցում	6000.0
